



Սույն թվականի մարտի 9-ին տեղի ունեցավ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ղեկավարության, ինստիտուտների տնօրենների համդիպումը Երևանի պետական համալսարանի գիտական հարցերի գծով պրոռեկտոր Ռաֆայել Բարխուդարյանի և պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Հանդիպման

յան զարգացման, պաշտպանության համակարգի ամրապնդման և այլ ռազմավարական ուղղություններով: Բայց, ցավոք, դա չի կատարվում: Ես մեկուկես տարի է՝ ԳԱԱ նախագահն եմ, այդ ընթացքում որևէ պատվեր որևէ գերատեսչությունից չեմ ստացել: Պետք է այս հարցին ճիշտ լուծում տրվի, ինստիտուտները պետք է պահանջարկով պայմանավորված պատվերներ իրականացնեն պետության առկա խնդիրների լուծման համար: Ինչ վերաբերում է բուհական գիտության զարգացմանն աջակցելուն, մենք պատրաստ ենք մեր ամբողջ գիտական ներուժը ներդնելու բուհական համակարգի զարգացման գործընթացներում: Մենք առաջարկել ենք տարբերակ, համաձայն որի ԳԱԱ-ի ինստիտուտների այն լաբորատորիաները, սեկտորները, բաժինները, որոնք իրենց մասնագիտական գործունեությամբ լիարժեք համապատասխանում են բուհի որևէ ստորաբաժանման (ամբիոն, ինստիտուտ, կենտրոն) գիտական ուղղվածությանը, կարող են միավորվել փոխադարձ համաձայնության պայմաններում: Այնուհետև, ՀՀ ԳԱԱ ինստիտուտներն անհրաժեշտ բարեփոխումներից հետո կարող են համագործակցել բուհի

տակրթական կլաստներ և այլ հասկացություններ, իրականացնելով համատեղ գիտակրթական նախաձեռնություններ: Ցանկացած ցնցում, արագ որոշում կարող են խաթարել այս կամ այն համակարգի կայուն զարգացումը»:

ԵՊՀ գիտական հարցերի գծով պրոռեկտոր Ռաֆայել Բարխուդարյանը ներկայացրեց ԵՊՀ-ի տպագրությունների վիճակագրությունը. «ԵՊՀ-ն ներկայումս տպագրում է ՀՀ-ից միջազգային շտեմարաններում տպագրված հոդվածների 20-30 տոկոսը: Դա ահռելի թիվ է, և ԵՊՀ-ն միջազգային շտեմարաններում ունի կայուն, առաջադեմ դիրք Հայաստանի մակարդակով»:

ՀՀ ԳԱԱ համակարգի ինստիտուտների՝ բուհերի հետ հնարավոր միացման վերաբերյալ նա ասաց. «Մենք սերտ համագործակցում ենք գիտական ինստիտուտների հետ: Գուցե պետք է տեսանելիության վրա աշխատենք, որպեսզի այդ համագործակցությունը երևա: Ի՞նչ է ենթադրում միավորվել: Բազմաթիվ հարցեր են առաջանում: Մենք չենք տեսել որևէ փաստաթուղթ, բայց ինչ-որ փաստաթուղթ պետք է տեսնենք, որ կարողանանք կարծիք ձևավորել»:

## ՀՀ ԳԱԱ-ն և ԵՊՀ-ն բնութագրում են գիտության և կրթության ոլորտների խնդիրները և զարգացման հեռանկարները

Ժամանակ քննարկվեցին գիտության և կրթության ոլորտների զարգացման հեռանկարները, ակադեմիական և բուհական գիտության ինտեգրման հնարավոր տարբերակները:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանն ասաց. «Աշխարհում չկա մոդել, որը կիրառելի լինի բոլոր պետությունների համար: Յուրաքանչյուր պետություն պատրաստում է սիմբիոզի մի տարբերակ՝ հարմարեցնելով աշխարհաքաղաքական իրավիճակին, պետության խնդիրներին, առանձնահատկություններին, կրթության և գիտության ոլորտների զարգացման իր երկրի ավանդույթներին: Մեզ համար էլ ընդունելի է այդպիսի տարբերակը»:

Նա նշեց, որ եվրոպական հանձնաժողովի դիտորդական խումբը մշտադիտարկում է անցկացրել Հայաստանում կրթության և գիտության ոլորտներում և որպես առավել իրատեսական մեր երկրի համար առաջարկել է տարբերակ, որը համահունչ է ֆրանսիական CNRS-ին (Գիտահետազոտական ազգային կենտրոն): «Համաձայն այդ տարբերակի՝ ԳԱԱ-ն իր համակարգով կարող է կատարել միջանկյալ դեր կրթության և արդյունաբերության միջև: Սա ցանցային համակարգ է, որը ներկայումս հաջողությամբ կիրառվում է մի շարք եվրոպական առաջատար պետություններում: Սա մեզ համար առավել իրատեսական է, քանի որ հիմնարար գիտության զարգացմանը զուգահեռ զբաղվում է նաև գիտության կիրառական բաղադրիչի զարգացման հիմնահարցերով: Մենք այսօր չունենք ճյուղային ինստիտուտներ, որոնց նպատակն է հիմնարար արդյունքները վերածել կիրառականի և առաջարկել ներդրման: Օտարումից ընդամենը երկու ինստիտուտ է փրկվել՝ Կենսատեխնոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտը և Ալիխանյանի ավանդազգային գիտական լաբորատորիան: Այսօր մեզ պետք են ինստիտուտներ, որոնք կզբաղվեն գիտահեն տնտեսության և ռազմարդյունաբերության համար գիտական հենք ստեղծելու հիմնահարցերով: Դա նշված է կառավարության կողմից ընդունված ՀՀ-ում գիտության զարգացման ռազմավարական ծրագրում: Տնտեսության համար գիտական հենք պետք է ստեղծեն մեր ինստիտուտները, ուրիշ ինստիտուտներ չկան, հետևաբար, ՀՀ ԳԱԱ կազմակերպությունները, բացի հիմնարար գիտությունից, լրջորեն պետք է զբաղվեն նաև կիրառական գիտությամբ», - ասաց Աշոտ Սադյանը:

Նա նշեց, որ ԳԱԱ-ն իր հիմնարար հետազոտությունների մասով ամբողջությամբ կարող է ինտեգրվել բուհական համակարգի հետ, իսկ կիրառական մասով՝ տնտեսական գործունեություն ծավալող կազմակերպությունների հետ: «Դրա համար կառավարությունը պետք է ՀՀ ԳԱԱ-ին իջեցնի պատվերներ՝ տնտեսու-



նոր ձևավորված կամ առկա, բայց հզորացված գիտահետազոտական ինստիտուտների, կենտրոնների, լաբորատորիաների հետ համատեղ դրամաշնորհային և այլ բնույթի ծրագրերի միջոցով: Այսինքն, ՀՀ ԳԱԱ-ն մասնակցում է բուհի գիտահետազոտական բաղադրիչի հզորացմանն ու արդիականացմանը, միաժամանակ, նաև համատեղ հետազոտական ծրագրերի միջոցով ինտեգրվում է բուհական գիտության հետ: Արդյունքում ունենում ենք համատեղ տպագրված գիտական հոդվածներ, մենագրություններ, դասագրքեր, կադրերի պատրաստում, գիտաժողովների անցկացում և այլն: Իրականում սա ինտեգրման այն ցանցային տարբերակն է, որը մեզ առաջարկել են եվրոպացի փորձագետները, և որը բովանդակությամբ համահունչ է CNRS-ին», - ասաց Աշոտ Սադյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահը շեշտեց, որ ակադեմիայի ինստիտուտների և բուհերի միջև համագործակցությունն ինչ-որ տեղ պետք է լինի «պարտադրված» պետության կողմից: «Գիտության կոմիտեն դրամաշնորհային ծրագրերի մրցույթ հայտարարելիս պետք է պահանջի, որ դրանք լինեն համատեղ ԳԱԱ-ի և բուհի գիտական խմբերի միջև, իսկ արդյունքները դառնան համատեղ սեփականություն: Այս պարագայում գիտահետազոտական ինստիտուտը հնարավորություն կունենա համագործակցելու համալսարանների հետ և իր ծառայությունները մատուցելու այն գերատեսչություններին, որոնք պատասխանատու են տնտեսության զարգացման համար: Ինստիտուտը, մեկ բուհի կազմի մեջ լինելով, չի ունենա այդ ազատությունը, իր գիտությունը դառնալու է բուհական, իսկ կիրառական գիտությունն անցնելու է երկրորդ պլան կամ աստիճանաբար վերանալու է: Կիրառական գիտությունը շատ կարևոր է մեր պետության զարգացման համար», - ասաց Աշոտ Սադյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահի գիտության և տեխնոլոգիաների գծով տեղակալ Վարդան Սահակյանը նշեց. «Հայաստանի համար առաջարկված մոդելը ենթադրում է ակադեմիական և բուհական համակարգերի սահուն ու անցնցուն համագործակցություն՝ ներմուծելով գի-

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանն ասաց. «Փաստաթուղթ չկա, բայց կա պարտադրանք: Կա գաղափար, որի իրականացման դեպքում ակադեմիական գիտությունը կփոշիանա: Տարբեր հանրապետությունների փորձը մեր աչքի առաջ է: Մենք կողմ ենք սերտ համագործակցությանը, չկա անհրաժեշտություն միավորվելու: Ո՛չ գիտությունը կշահի, ո՛չ կրթությունը»:

ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն Խաչատուր Մելիքսեթյանը նշեց. «Պետք է օգտագործել ակադեմիական ինստիտուտների ներուժը՝ համալսարանական կրթության մակարդակը բարձրացնելու համար: Օրինակ, կարող է լինել հա-



մատեղ մագիստրատուրա: Արհեստական միավորումը կարող է խորացնել խնդիրները»:

ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Խաչատուր Ներկարարյանը նշեց. «Խոսքը չպետք է գնա մեխանիկական միացման մասին, դա անիմաստ է: Կրթական համակարգը կարող է օգտակար լինել և ներառել գիտականը, եթե մենք ունենանք ուսանողակենտրոն համակարգ, իսկ մենք չունենք մեզնիս համակարգ: Պետք է տեսնել՝ ինչ ունենք իրականում, հետո փորձել իրականացնել այդ միացումը, որպեսզի արդյունավետ լինի»:

ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մարատ Գրիգորյանի կարծիքով պետք է ուժեղացնել համագործակցությունը և շարժվել ինտեգրման ճանապարհով: «Ակադեմիական ինստիտուտների հետ միշտ էլ համագործակցել ենք և համագործակցելու ենք: Եթե մեր համագործակցությունը ճիշտ օգտագործենք, հաջողությունը մեծ կլինի», - ասաց Մարատ Գրիգորյանը:

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի փոխտնօրեն Գոհար Ցականովան նշեց, որ ինստիտուտն ակտիվ համագործակցում է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի հետ, և առաջարկեց խորացնել համագործակցությունը:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**



## ՀՀ ԳԱԱ գիտական և գիտատեխնոլոգիական խոշորամասշտաբ ծրագրերի մշակման մշտական հարթակում քննարկվեցին ՀՀ ԳԱԱ ինստիտուտների առաջարկությունները

Ս/թ.-ի մարտի 16-ին տեղի ունեցավ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում ստեղծված գիտական և գիտատեխնոլոգիական խոշորամասշտաբ ծրագրերի մշակման մշտական հարթակի նիստը: Նիստին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ ղեկավարությունը, ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտների տնօրենները, գիտքարտուղարներ, գիտաշխատողներ: Քննարկվեցին ԳԱԱ ինստիտուտների առաջարկությունները՝ ուղղված ԳԱԱ համակարգի բարեփոխումներին, մասնակցային որոշումների ընդունմանը, երիտասարդ գիտնականների խրախուսմանը, գիտական արդյունքների ապրանքանագմանը, փոխգործակցության խորացմանը, գիտության հանրայնացմանը, գիտահետազոտական ինստիտուտների շենքերի պահպանմանը և այլ հարցեր: ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սարգսյան առաջարկությունների վերաբերյալ ներկայացրեց ԳԱԱ-ի դիրքորոշումը, առկա խոչընդոտները, իրականացվող և նախատեսվող քայլերը: «Ուսումնասիրելու ենք Չեխիայի, Բելառուսի, Լիտվայի ակադեմիաների փորձը և համատեղ քննարկումների ու աշխատանքի արդյունքում փորձելու ենք զտնել արդյունավետ լուծումներ», - ասաց Աշոտ Սարգսյանը:

Անդրադառնալով երիտասարդ գիտնականների խրախուսման առաջարկին՝ ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց. «Մենք մտադիր ենք խրախուսման հատուկ ֆոնդ ստեղծել ԳԱԱ-ում շուրջ 100 միլիոն դրամի չափով: Ֆոնդը կստեղծվի ԳԱԱ միջոցներից և այն անընդհատ կհամալրվի արտաբյուջետային միջոցներից: Ֆոնդի շրջանակում գիտական լավագույն աշխատանքների համար մրցույթ կանցկացվի, երիտասարդները կֆինանսավորվեն մի քանի ամսով կամ մեկ տարով ար-

տերկրի գիտահետազոտական կազմակերպություններում մասնագիտական կարողությունների զարգացման համար, արտերկրից մասնագետներ կիրավորվեն: Հուսով եմ, որ ՀՀ կառավարությունը չի մերժի ՀՀ ԳԱԱ-ում երիտասարդների խրախուսման ֆոնդի ստեղծման առաջարկը»:

Աշոտ Սարգսյանը նաև անդրադարձավ ԳԱԱ ռեսուրսների օգտագործման հնարավորություններին: «Սարքավորումների բյուջեն երկու կետով է եղել՝ գիտական և ներդրումային, սակայն այս տարի ներդրումային մասով ֆինանսավորումը կտրել են և այդ մասով տվել Գիտության կոմիտեին: Իսկ մյուս մասը, այն է՝ գիտական սարքավորումների ձեռքբերման համար ֆինանսավորում, սահմանափակ գումար է, այն բաշխվում է ինստիտուտներին», - ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը:

Աշոտ Սարգսյանը նշեց, որ ԳԱԱ ինստիտուտների հին սարքավորումների դուրսգրման խնդրի լուծման համար կստեղծվի հանձնաժողով:

ՀՀ ԳԱԱ նախագահին ասաց, որ նախատեսվում է դիմել Գիտության կոմիտե՝ առաջարկելով մեծացնել կիրառական ծրագրերի համար տրամադրվող ֆինանսավորումը:

Հարցադրումներով հանդես եկան Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն Արսեն Առաքելյանը, Ա Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Լիլիթ Սահակյանը, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի կենտրոնի տնօրեն Սարգիս Աղայանը, Մաթեմատիկայի ինստիտուտի տնօրեն Ռաֆիկ Արամյանը:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**


## ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի նոր բացահայտումը

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում բացահայտել են, որ կաթնաթթվային բակտերիաների (ԿԹԲ) շտամները և դրանց աճեցումից հետո ստացված հալանամանային պատրաստուկները՝ բակտերիոցինները, ճնշում են կաթնամթերք փչացնող միկրոօրգանիզմների աճը տարբեր արդյունավետությամբ:

Հալանամանային ակտիվությամբ բնական մոր միջոցների ստացումը գերխնդիր է ժամանակակից բժշկության համար: Վերջին տարիներին Հայաստանում խիստ ավելացել է տարբեր կաթնամթերքներից և մսամթերքներից սննդային թունավորումների հաճախականությունը: Ըստ ՀՀ ԳԱԱ Փորձաքննութ-

խատող, կենսաբանական գիտությունների թեկնածու Քրիստինա Կարապետյանը:

Ներկայացված հետազոտության արդյունքներն ունեն կիրառական մշակակություն սննդարդյունաբերության մեջ ներդրման համար: Հալանամանային ակտիվությամբ օժտված ԿԹԲ-ների շտամների հիման վրա կարող են մշակվել մոր՝ բազմակի շտամներ պարունակող տեղական արտադրության մերաններ, որոնք մրցունակ կլինեն կաթնամթերքի արտադրություններում օգտագործվող ներկրվող առևտրային մերանների հետ: Կաթնաթթվային մանրէների կողմից սինթեզվող հալանամանային նյութերը կարող են օգտագործվել որպես



յունների ազգային բյուրոյի տվյալների վարակների հիմնական հարուցիչները *Escherichia coli* և *Staphylococcus aureus* մանրէներն են:

«Վերջին տասնամյակի ընթացքում մեր կողմից իրականացվել են կաթնաթթվային բակտերիաների մոր էնդենիկ շտամների մեկուսացում և հետազոտում: Ուսումնասիրվել է կաթնաթթվային բակտերիաների ավելի քան 20 մույնականացված շտամների և դրանց բակտերիոցինների հալանամանային ակտիվության տիրույթը՝ սննդի արդյունաբերության մեջ որպես բնական կենսապահածոյացման միջոցներ կիրառելու նպատակով: Պարզել ենք առավել բարձր արգելակիչ ակտիվություն ցուցաբերած շտամները», - ասաց գիտական խմբի ղեկավար, կենտրոնի պրոբիոտիկների կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի ավագ գիտաշ-

բնական կոնսերվանտներ՝ սննդամթերքների կենսապահածոյացման և դրանց պիտանելիության ժամկետների երկարացման համար:

Հետազոտությունն իրականացվել է «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի պրոբիոտիկների կենսատեխնոլոգիայի լաբորատորիայում՝ բազային ֆինանսավորմամբ իրականացված թեմաների և դրամաշնորհի շրջանակներում:

Հետազոտության արդյունքները տպագրվել են միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուում:

Գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված են լաբորատորիայի երիտասարդ գիտնականները:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## Ֆիանոբակտերիալ ակինետոնների դերը Սևանա լճի էկոհամակարգում

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտաշխատողներն առաջին անգամ ուսումնասիրել են ցիանոբակտերիալ ակինետոնների դերը Սևանա լճի էկոհամակարգում:

Ֆիտոպլանկտոնի կարևոր բաղադրիչներից են կապտականաչ ջրիմուռները՝ ցիանոբակտերիաները: Աշնանը ցիանոբակտերիաների զգալի քանակությունը քայքայվում է հատակային նստվածքներում կուտակման ընթացքում: Որոշ թելային թալում ունեցող ձկների բնորոշ է ակինետոնների՝ սպորների ձևավորումը: Դրանք սովորաբար տարբերվում են վեգետատիվ մյուս բջիջներից, ունեն առավել հաստ թաղանթ, պարունակում են պաշարանյութեր, ուստի համարվում են առավել տոլերանտ, ինչի արդյունքում պահպանվում են հիդրոէկոհամակարգի հատակին և առաջին խիլ բարենպաստ պայմանների դեպքում կարող են զարգանալ և անսեռ բազմացման ճանապարհով սկիզբ տալ ջրիմուռի մոր թալումի ձևավորման:

«Առաջին անգամ ուսումնասիրվել է ցիանոբակտերիալ ակինետոնների դերը Սևանա լճի էկոհամակարգում: Պարզվել է, որ հատակային նստվածքներում ձմեռող այս ցիանոբակտերիաները համապատասխան պայմաններում կարող են ջրային միջավայրում նորից համալրել ցիանոբակտերիալ կազմը: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ Մեծ Սևանի հատակային նստվածքներում ակինետոնները նկատելիորեն շատ են Փոքր Սևանի համեմատ: Լաբորատոր փորձերի արդյունքում պարզվել է, որ ակինետոնների զարգացումն արգե-

լակվում է լույսի բացակայության և ճնշվում՝ կենսածին նյութերի ցածր կոնցենտրացիաների պայմաններում: Լուսավորության դեպքում լճի 1q հատակային նստվածքում առկա ակինետոններից կարող է զարգանալ մինչև 21000 ցիանոբակտերիալ բջիջ», - ասաց գիտական կենտրոնի Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի կիրառական հիդրոէկոլոգիայի լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու Գոռ Գևորգյանը: Նա նշեց, որ Սևանա լճում ակինետոնային հետազոտությունները լրացնում են լճի գրեթե մեկդարյա պատմություն ունեցող հիդրոկենսաբանական տվյալներում այս մասով առկա հիմնարար բացերը:

Գիտական խումբն իրականացրել է նաև լճում ֆիտոպլանկտոնի որակական ամալիզ՝ հիմնված Փոքր և Մեծ Սևանների 80 մ, 43 մ և 30 մ խորքային հատվածներում անցկացված հետազոտությունների վրա:

Ֆիտոպլանկտոնը կազմված է տարբեր խմբերի պատկանող միկրոօրգանիզմներից, որոնք, շնորհիվ քրոմատոֆորներում առկա պիգմենտների՝ մասնավորապես քլորոֆիլի մոլեկուլների, իրականացնում են ֆոտոսինթեզ՝ անօրգանական նյութերից (ածխաթթու գազ և ջուր) օրգանական նյութի սինթեզ՝ օգտագործելով արեգակնային լույսի էներգիան: Այս ունակության շնորհիվ, ստեղծելով օրգանական նյութ, ֆիտոպլանկտոնը սնունդ է տրամադրում սննդային շղթայի մյուս օղակներին: Ֆիտոպլանկտոնի կենսագործունեությունն ապահովվում է կենսածին նյութերի առկայությամբ: Կենսածին նյութերով



հիդրոէկոհամակարգի գերհարստացումը նպաստում է ֆիտոպլանկտոնային համակենցության որակական և քանակական կառուցվածքի փոփոխությանը:

Հետազոտություններն իրականացվել են «Սևանա լճում ծաղկող ցիանոբակտերիաների աճող խնդիրը. մեխանիզմների, շարժիչ ուժերի և մոր գործիքների հայտնաբերում լճի մոնիթորինգի և կառավարման համար» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել է ԿԳՄՍ նախարարության գիտության կոմիտեից:

Հետազոտություններն իրականացվել են Գերմանիայի Շրջակա միջավայրի հետազոտությունների Հելմհոլցի կենտրոնի հետ համագործակցությամբ:

Հետազոտական խմբում ներգրավված է եղել հինգ հայ և մեկ գերմանացի մասնագետ, այդ թվում՝ երեք երիտասարդ գիտնական:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## ՄՏՔԵՐԻ ԸԱՐԹԱԿ



բերություն բնագիտական առարկաների, հայոց պատմությունը, հայ գրականությունն ունեն ազգային հիշողություն: Հանուն ինչ-որ անհեթեթ «Հուզանք ու զանգ»-ի պետք էր այդ հիշողությունը վերացնել, և վերացնում են: Ի վերջո, փաստ է, որ Հայաստանում չկայացավ ավագ դպրոցը: Ուսուցման որակը շատ ընկած է, այդ իսկ պատճառով հատկապես 11-12-րդ դասարաններում հաճախումները շատ անբավարար են, որովհետև աշակերտները պարապում են կրկնուսույցների մոտ:

Մեծ փորձությունների ենթարկվեց գիտությունը: Միշտ չէ, որ ինստիտուտների

անգիտանալով, որ նախ՝ գիտությունը համաշխարհային արժեք է, և ապա՝ գիտության բնագավառ է հայագիտությունը, որի տեղը հայրենիքն է:

Ակնհայտ է, որ բոլոր առումներով ՀՀ-ն դարձել է համաշխարհայնացման ուժերի փորձադաշտ: Սուտը թևեր է առել ու երկիր է քանդում: Քանի կար հայտարարում էին՝ բոլոր բուհերը պետք է հավաքել Գյումրիում, Գյումրին դարձնել ուսանողական քաղաք: Հիմա էլ հայտարարում են Աշտարակ քաղաքում ուսանողական ավան կառուցելու և բուհերն այնտեղ տեղափոխելու մասին: Իսկ փորձը ցույց է տալիս, որ նպատակն ընդամենը եղածը քանդելն է, թե հետո ինչ կլինի, ամենակն կարևոր չէ: Դուք մի Հյուսիս-Հարավ ճանապարհ չեք կարողանում ավարտին հասցնել, դուք Աջափնյակ տանող մի կիսակառույց մետրոյի կայարան չեք կարողանում շահագործման հանձնել, այդ ի՞նչ նվաճումներով եք պարծենում: Մի պահ հե՛տ նայեք և հիշե՛ք «Նաիրիտ» քիմկոմբինատի ճակատագիրը: Այս ամենը հուշում է մի իրողություն. կորել է վստահությունը իշխանությունների հանդեպ:

Եվ ապա՝ 44-օրյա պատերազմի դաժան դասերից հետո, շրջափակված Արցախից հետո, այս շարունակական ավերիչ արտագաղթից հետո մի պահ դադար տվեք ձեր հեղափոխության կործանարար տարերքին և սթափվե՛ք, հակառակ դեպքում պիտի մտածենք, որ դուք գիտակցաբար կործանում եք Հայաստանը: Մի՛ մոռացեք, պատմություն կա, և պատմությունը ձեր ղառաստանը պիտի անի: Մի՛ մոռացեք Օտյամի Շապլվարն ու ընկեր Փանջունու ազգաքանդ հերոսական գործունեությունը:

Այս դաժան ժամանակներում, երբ ամեն մի երկիր իր վաղվա օրվա մասին է մտածում և խոսում սերունդների առաջ ունեցած պատասխանատվության մասին, մենք կորցնում ենք ներկա օրը և մեր անխոհեմ քաղաքականությամբ վաղվա

սերունդներին հեռացնում հայրենիքից: Համաշխարհայնացման պահանջները համընկնում են մեր թշնամիների հնօրյա երազանքին՝ Հայաստանն առանց հայերի, միայն տարածություն ու սպառնալից շուկա: Այսինքն՝ դուք ո՞վ եք, որ Արցախ ունենաք, տնտեսություն ու գիտություն ունենաք, դա ի՞նչ ձեր բանն է:

Ահա թե ինչու են ուզում Ակադեմիան փակել: Այս ամենն իշխանությունների համար ունի նաև մեկ այլ անուն՝ օպտիմալացում՝ դպրոցները միավորել, բուհերը միավորել, գիտական հաստատությունները նախ կցել իրար և հետո միավորել բուհերի հետ: Այս աղետը պիտի հասցնի վերջին երկու հայի միավորման՝ որպես թանգարանային մոուլ:

Իսկ Ակադեմիայի առումով մի՛ մոռացեք, որ այն բացվել է երկրորդ աշխարհամարտի ամենաթեժ օրերին, որ անցած տարիներին ձեռք է բերել համաշխարհային համբավ, իսկ այս տարի լրանում է հիմնադրման 80-ամյակը: Մի՛ մոռացեք նաև, որ գիտության դրվածքով Հայաստանը ԽՍՀՄ համակարգում 3-րդն էր՝ ՌԴ-ից և Ուկրաինայից հետո:

Վերջերս համացանցում տարածվեցին ԿԳՄՍ նախարարի մտքերի հերթական փայլատալանդները: Ըստ նրա՝ «Հայրենասիրությունը շատ վտանգավոր գաղափար է: Ոչ ոք չգիտի՝ հայրենիքը ինչ է, որտեղից է սկսվում և ավարտվում...»: Ահա թե ում են վստահել մեր ազգային դիմագիծը վառ պահող կարևորագույն՝ կրթության, գիտության և մշակույթի ոլորտների համակարգման աշխատանքները, ինչը, ցավոք, շարունակում ենք հանդուրժել: Ու հենց դրանից էլ ծնվում են մման ապագային գաղափարներ կրողների նախահարձակ գործողությունները:

Սթափվե՛ք, քանի դեռ ուշ չէ...

**Դավիթ ԳԱՄԴԱՐՅԱՆ**  
**Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

## ԿՈՉ ՄԹԱՓՈՒԹՅԱՆ

Մի չար ուժ մեր անկումն է գուժում: Համաշխարհայնացման (գլոբալիզացիա) կործանարար ալիքն է, որի համծնակատարները մեր գործող իշխանություններն են:

Ամսխիթար վիճակում են երկրի տնտեսությունը, կրթական համակարգը, մշակույթը: Խախտվել է հայ մարդու ավանդական հոգեկերտվածքը, խարխվել բարոյական նկարագիրը, նահանջել հայրենասիրությունը:

Վերջին շրջանում ծանր փորձության ենթարկվեց հատկապես կրթության և գիտության համակարգը: Առաջին ծանր հարվածը 2018-ին Կրթության ազգային ինստիտուտի և դպրոցին հասցեագրված տասը անուն ամսագրերի փակումն էր: Հաջորդ հարվածը նոր չափորոշիչներով դասագրքեր ստեղծելու ծրագիրն էր, որն այս տարի կյանքի է կոչվում, և որտեղ հիմնավորապես ոտնահարված են հումանիտար առարկաների պահանջները: Վերացվել են ժամանակագրական հաջորդականություն, պատմականություն հասկացությունները, որովհետև, ի տար-

տնօրեններ նշանակվեցին տվյալ բնագավառի պատասխանատու առաջին դեմքերը, այդ մասին շատ է գրվել, իսկ բուն գիտությունը հաճախ պատսպարվեց ատենախոսության սահմաններում: Գիտությունը թանկ հաճույք է, մինչդեռ վարձատրությունն ամոթալիորեն ցածր է: Այս ընթացքում իրենց բնագավառների բազմաթիվ երևելի դեմքեր հեռացան երկրից: Այս ամենով հանդերձ Ակադեմիան տոկաց և դիմացավ: Իսկ հիմա համաշխարհայնացման հովերով տարված քաջարի պաշտոնյաները երկու ոտքը դրել են մի կոշիկի մեջ և նույնն են կրկնում՝ Ակադեմիան պետք է փակվի, իսկ գիտաշխատողները պետք է կցվեն բուհերին: Սա աղաղակող սխալ է, որովհետև այսօր ծանր է նաև բուհերի վիճակը, պակասել են դիմորդները, երբեմն ընդունելությունը կազմակերպում են ամենացածր գնահատականներով: Դասախոսների ծանրաբեռնվածությունը կրճատվում է: Ի՞նչ գիտության մասին է խոսքը:

Պատճառաբանում են՝ չկա տնտեսություն, որպեսզի գիտությունը ներդրվի,

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ  
ԱՆԸՄԲՈՒՆՈՒՄ

(Մանրապատում)

Փիլիսոփայական գիտությունների թեկնածուն գնում է իրենց գյուղն ու համդիպում իր երբեմնի դասընկերոջը, որ համալսարանն ավարտելուց հետո վերադարձել էր գյուղ և դպրոցի տնօրենն էր: Վերջինս դիմում է ընկերոջը, թե.

- Կարո՞ղ ես փիլիսոփայական թեմայով մի դասախոսություն կարդալ մեր դպրոցի աշակերտների համար, ասեմք՝ գեղեցիկի կանտյան ըմբռնումը:

- Դժվար է, չեն հասկանա:

- Թող չհասկանան: Ես էլ հենց էդ են ուզում: Դա նրանց համար կունենա դաստիարակչական նշանակություն:

- Կատակում ես, հա՞:

- Ամենահին: Սա կատակ չի, այլ մանկավարժություն: Թող չհասկանան ու իմանան, որ ես աշխարհում իրենց իմացածից ու հասկացողությունից վեր բաներ կան: Թող չհասկանան ու մտահոգվեն, մի քիչ մտածեն, թե ով են, ինչ են ուզում, ուր են գնում: Մարդուն երբեմն պիտի կանգնեցնես անհասկանալի բաների առաջ, որ առաջադիմի, թե չէ էնքան հասկանալի բան կա ու էնքան պարզ բացատրություն, անվիճելի ու անօգուտ:

- Սա եղավ փիլիսոփայություն:

- Այո՛, հասկացողին հասկացնելս ո՞րն է, ու՞մ է պետք:

Անդրադառնալով այս գրույցին՝ հիշեցի Տարտուսի համալսարանի պրոֆեսոր Յուրի Լոտմանի մի խոսքը՝ «արդյունավետ անըմբռնում», ու մտածեցի՝ **չհասկանալը մարդուս մղում է մտածելու՞, թե՞ խուսափելու մտածող մարդկանցից:**

Հ.Գ. Տարիներ առաջ գրի առած այս գրույցը հիմա հրապարակելը պայմանավորված է մերօրյա իրողություններով: Այո՛, չհասկացողները խուսափում են մտածող մարդկանցից: Նրանց «անըմբռնումից» պարբերաբար ծնվում են անիրատեսական և ժամանակավրեպ գաղափարներ, որոնք կամ արտուրդի ժանրից են (ակադեմիական քաղաքի ստեղծում), կամ կարող են կործանարար լինել տվյալ բնագավառի համար (ակադեմիական համակարգի վերաբերյալ շահարկումներ):

**Հենրիկ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**  
**ՀՀ ԳԱՄ թղթակից անդամ**

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ



## ՄԻՐԱՆՈՒՑ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

**ՀՀ ԳԱՄ Մամուլ Արելյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի գիտաշխատող: «Հասարակական, հայագիտական և հումանիտար ոլորտներում հետազոտությունների» մրցույթի հաղթող:**

Մրցույթում շահել ենք «Հայկական լեզբնդների գերմանական գրառումները և մեկնաբանությունները» թեմայով: Այս աշխատանքը կարող է դառնալ բնագրային, աղբյուրագիտական հիմք, որի շնորհիվ կկատարվեն հարցի վերաբերյալ տեսական բոլոր ուսումնասիրությունները: Հետազոտությունը կմեծացնի նաև միջազգային հետաքրքրությունը հայկական թեմաներով եվրոպական, մասնավորապես գերմանական ստեղծագործությունների նկատմամբ՝ լուսաբանելով դրանց ստեղծման և տարածման մշակութային պատճառները: Ես և խմբի մյուս կատարող անդամը՝ ինստիտուտի ասպիրանտ Թերեզա Թադևոսյանը, տի-

րապետում ենք գերմաներենին: Դա հնարավորություն է տալիս միջազգային գիտատեղեկատվական շտեմարանների ամսագրերում ընդգրկված գերմաներեն հոդվածները ևս ներառելու հետազոտության նյութի մեջ:

Ուսումնասիրությունը և «Scopus», «Web of science» գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում հոդվածներ տպագրելը կարևոր են երկու տեսանկյունից: Նախ՝ ծանոթանում ենք արտերկրի մեր գործընկերների գիտական նորամուծություններին: Այնուհետև տվյալ գիտատեղեկատվական շտեմարաններում տպագրվելով՝ մեր գիտական միտքը կարող ենք հասանելի դարձնել միջազգային գիտական հանրությանը, ստեղծել նոր կապեր և դրանք ծառայեցնել ի նպաստ հայագիտության զարգացման: Այս նպատակով առաջնային է քայլեր ձեռնարկելը գիտաչափական շտեմարաններում ընդգրկված պարբերականների հոդվածներն ուսումնասիրելու, մեր գիտական աշխատանքներում հղումներ կատարելու, կապեր ստեղծելու և ապա հոդվածներ տպագրելու ուղղությամբ:

Հետազոտական աշխատանքում մի կողմից խնդիր ենք դրել ցույց տալու, թե ինչպիսի տարբերակներով են նույն գրույցներն ու լեզբնդներն արտահայտվել հայ և գերմանացի հեղինակների ստեղծագործություններում և ինչ մշակումների են ենթարկվել: Մյուս կողմից նպատակ ունենք ցույց տալու, թե հայկական լեզբնդները, գերմանացի ուղեգրողների կողմից գրառվելով, ինչ արժևորման ու բնորոշումների են ենթարկվել: Դրանք կազմել են միայն իրենց ուղեգրությունների մաս, թե՞ նաև երկրորդ կյանք են ստացել՝ օգտագործվելով գերմանական գրականության և բանագիտության մեջ: Աշխատանքում պետք է իմնավորվի, որ այս հետազոտությունը կարևոր է և՛ հայագիտության զարգացման առումով, և՛ եվրոպական հետաքրքրվածության:

Ուսումնասիրությունը կարևոր է գրական կապերի վերհանման տեսանկյունից: Նախ՝ ցույց տալու հայկական լեզբնդների ունեցած ազդեցությունը գերմանական գրականության վրա, վեր հանելու գրական փոխառնությունները և պարզելու՝ ինչպես են հայկական ավանդություններն ինքնուրույն զարգացում ապրել և նոր ստեղծագործություններով շարունակվել գերմանական գրականության շրջանակում՝ հասնելով անգամ նոր շրջանի գրականության: Այս հարցերը ենթադրում են գիտական փոխգործակցություն:

## ՎԱՐԿԱՆԻՇԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ

Երկրի վարկանիշն առանձնահատուկ նշանակություն ունի տնտեսության զարգացման համար: Տեղեկատվական հասարակության ժամանակակից պայմաններում դժվարանում է որոշակի տեղեկատվության, ուղերժի փոխանցումը թիրախային «լսարանին»: Այս խնդրի լուծման ուղիներից մեկը օբյեկտի՝ երկրի դրական վարկանիշի ստեղծումն է:

Վերջին տարիներին ՀՀ-ի շուրջ ստեղծված իրադարձությունները սպառնալիք են միջազգային դրական վարկանիշի համար՝ վտանգելով նաև միջազգային տնտեսական հարաբերությունները:

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում «Ճգնաժամային երկրների վարկանիշը բնութագրող տնտեսական գործոնները» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ տ.գ.թ. Տ. Փարսադանյան) ուսումնասիրվել են ճգնաժամային իրավիճակների հաղթահարման համար խիստ կարևոր, երկրի վարկանիշի բաղկացուցիչ մասերի բարենորոգման խնդիրները:

Դրական վարկանիշի կերտման գործընթացում կարևորվում է կոռուպցիայի բացառումը: Կոռուպցիայի դեմ պայքարի հարցում մշակվել է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարություն: Արդյունքներն ավելի տեսանելի, ծանրակշիռ և անաչառ դարձնելու համար գիտնականների կողմից առաջարկվում է ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներգրավել տնտեսագիտական և իրավագիտական մասնագիտություն ունեցող միջազգային փորձագետներին:

Տնտեսական գործոնների ուսումնասիրության արդյունքում հաստատվել է կոռեկցիոն կապ դրանց միջև, և դուրս են բերվել գործակիցները: Մեր երկրի վարկանիշի բարձրացման դեպքում թիրախում պետք է պահվեն օտարերկրյա ուղղակի ներդրումները, որոնց փոփոխությունը կարող է նպաստել այլ գործոնների փոփոխությանը:

«ՀՀ և ԵԱՏՄ երկրների հարկային քաղաքականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ն ունի մրցակցային առավելություններ ՌԴ-ի և Բելառուսի համեմատ, սակայն զիջում է Վրաստանին: Այս դեպքում պետք է կամ հարկային քաղաքականության մեղմմանն ուղղված քայլեր ձեռնարկել, կամ առաջարկել այլ առավելություններ (օրինակ՝ ապահովել անվտանգության ավելի բարձր մակարդակ, որը պայմանավորում է երկրի վարկանիշը)», - գրույցի ժամանակ նշեց Տ. Փարսադանյանը:

Ամիրաթեշտ է իրականացնել հայկական ապրանքների ներքին պահանջարկի ակտիվացում՝ որպես տնտեսական աճի վերականգնման հիմք: Առանցքային դեր պետք է ունենա պետության ներքին պահանջարկը (պետական ներդրումներ և պետական գնումներ): Միաժամանակ հիմնական շեշտը դրվելու է բիզնեսի ակտիվության վերականգնման վրա՝ տոկոսադրույքների սուբսիդավորման, լիզինգի զարգացման, սպառողական վարկավորմանն աջակցելու միջոցով:

**Ստեփան ՊԱՊԿՅԱՆ**  
**Տեխնիկական գիտությունների թեկնածու**

## ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Բռնության և պատերազմի» թեմայով ուսումնասիրությունների արդյունքները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտում 10 տարուց ավելի է կատարվում են «Բռնության և պատերազմի» մարդաբանական ուսումնասիրություններ: Դրանք բազմաշերտ են. նյութեր են հավաքվում, և վերլուծվում են բախումների գոտու բնակչության և ընդհանուր հասարակության վրա բռնությունների և ռազմական բախումների պատմական և ընթացիկ դրվագների ազդեցությունները, դրանց անհատական և հասարակական ընկալումների, փախուստների, փախստականների հետազոտված կյանքի, անցյալի պատմական բռնությունների անհատական և սոցիալական հիշողության և այդ հիշողության ձևավորման քաղաքականության թեմաները: Հետազոտություններն ընդգրկում են ինչպես ներպետական քաղաքական բռնությունների (թեմիկական աքսորներ, դեպորտացիաներ, ռազմական ուժով ճնշումներ, տեղափոխության հարկադրանքներ և այլն), այնպես էլ միջպետական լարվածությունների և ռազմական գործողությունների ընդհանուր հասարակական, մասնավոր՝ սահմանային գոտիների բնակչության վրա ազդեցությունները:

2021 թ. առաջին անգամ վերլուծվել են 1992 թ. փետրվարի 26-ին հայկական ռազմական ուժերի կողմից Արցախի հուշալու բնակավայրի գրավման և դրան հաջորդած օրերին բնակավայրի քաղաքացիական բնակչության ճակատագրի մանրամասներն արխիվային, դաշտային, հայկական, ադրբեջանական, ռուսական և անգլալեզու տպագիր աղբյուրների նյութերի համակցմամբ: Ներկայացվել է Ադրբեջանի ժողովրդական ճակատի ռազմական խմբավորումների կողմից հուշալուի քաղաքացիական բնակչությանը հանցավոր խաբեությանը զինված բախումների մեջ ներքաշելու ծրագիրը, ինչի հետևանքով քաղաքացիական բնակչության զգալի մասը բնակավայրը լքելուց հետո մեծ կորուստներ և զոհեր է ունեցել նախաձեռնող ճանապարհին: Բացահայտվել է հուշալու բնակավայրը գրավելու և «բնակչության նկատմամբ ցեղասպանական գործողություններ իրականացնելու» մասին ադրբեջանաթուրքական տարատեսակ կեղծ գիտական, դիվանագիտական, մշակութային և այլ քաղաքական միջոցներով 28 տարվա ընթացքում մեծ քանակով և լայնորեն տիրաժավորված կեղծիքը: Հետազոտության հիման վրա 2021թ. հրատարակվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Հրանուշ Խաչատրյանի հեղինակած «Խուշալուի «ցեղասպանությունը» և դրա առաքելությունը՝ Ղարաբաղյան կոնֆլիկտում» գիտական աշխատությունը:

«Մեր նպատակային հետազոտությունները սկսվել են դեռևս 2010-2013 թթ. Գերմանիայի արտաքին գործերի նախարարության կողմից ֆինանսավորվող «Հայ-թուրքական հաշտեցման ծրագրի» շրջանակներում՝ Գերմանիայի «ԴՎԻ ինտերնացիոնալ» (DVV International) կազմակերպության միջնորդությամբ: Դրանից հետո մենք աշխատել ենք ՀՀ պետական բյուջեից գիտական թեմաների ֆինանսավորման շրջանակներում: Որպես նպատակային հետազոտական աշ-

խատանք՝ «Պատերազմի մարդաբանություն» անվանվել է վերջին երեք տարիներին», - ասաց Հրանուշ Խաչատրյանը:

Կատարվել են հայերի և Ղերսիմի ալկիների՝ Թուրքիայում իրականացված ցեղասպանության, 1920 թ. հայ-թուրքական պատերազմի, 1918-1920 թթ. Կովկասում տեղի ունեցած հայ-թուրքական հակամարտության, «Արևելյան Անատոլիայից» Արևմտյան Հայաստանի տարածքից տեղահանված բնակչության, 1980 թ. հետո սկսված Ղարաբաղյան հակամարտության, դրանում առկա բռնության /դեպորտացիաների, Սումգայիթի և Բաքվի հայկական ջարդերի, փախստականության, կոնկրետ ռազմական բախումների և մարդկանց, հասարակությունների վրա դրանց հետևանքների և այդ հետևանքների մեկնաբանության, թշնամանքի և ատելության սերմանման քաղաքականության, իշխանությունների կողմից հասարակական հիշո-

ղության ձևավորման քաղաքականության, ինքնությունների փոփոխության, նոր ինքնությունների ձևավորման, դրանց հետևանքների մարդաբանական ուսումնասիրություններ:

«Ուսումնասիրության արդյունքում հավաքվել են մեծ քանակությամբ դաշտային և արխիվային նյութեր Թուրքիայի գավառներում և Կոստանդնուպոլսում՝ ներկայիս Ստամբուլում, Հայաստանում, Արցախում, Ռուսաստանի Ղազնուքում, քրիստոնյա, իսլամացված քրդացած, թրքացած, առաքացած, ալկիացած հայերի, զազա ալկիների, թուրքահայ փախստականների ժառանգների, ադրբեջանահայ փախստականության, ուղի փախստականների, փախստական և տեղափոխված սիրիահայերի վերաբերյալ: Արվել են դիտարկումներ Արցախի Հանրապետության տարածքի ավերված բնակավայրերում, հավաքվել են արխիվային նոր փաստաթղթեր, անց են կացվել նպատակային գիտաժողովներ, գրվել են մեմորալներ, հրատարակվել են ժողովածուներ, հոդվածներ գիտական պարբերականներում, ծանոթագրված և խմբագրված հուշագրություններ, գրախոսություններ: Թեմայի վերաբերյալ կազմակերպվել են ցուցահանդեսներ, դասախոսություններ և քննարկումներ նաև ՀՀ մարզերում», - ասաց Հրանուշ Խաչատրյանը:

Ուսումնասիրությունների հիման վրա հրատարակվել են շուրջ 80 աշխատություններ, գիտական և գիտահանրամատչելի հոդվածներ, գրախոսություններ Հրանուշ Խաչատրյանի հեղինակությամբ և համահեղինակությամբ հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և թուրքերեն: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողներ Գայանե Շադոյանը, Արսեն Հակոբյանը, Հարություն Մարությանը, Լևոն Աբրահամյանը, Աղասի Թադևոսյանը և այլք բռնության և պատերազմի տարբեր խնդիրների մարդաբանական վերլուծությունների հրապարակումներով և գիտաժողովների ելույթներով ամրագրվել են բռնության լեզվի, զոհի թիրախավորման, հոգեբանության, խմբային մարդկային, այդ թվում՝ էթնիկական վարքի, պաշտոնական և համայնի հիշողության և դրանց ձևավորումների քաղաքականության խնդիրներին: Նյութահավաքությունը, վերլուծությունները շարունակվում են:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## Հնագիտական պեղումները Շիրակում հնարավորություն են տալիս հետևելու Ք. ա. IX-VIII դարերում տեղի ունեցած քաղաքական, ռազմական տեղաշարժերին

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատողները Գերմանիայի Հալլե քաղաքի Մարտին Լյութերի անվան համալսարանի գործընկերների հետ պեղումներ են իրականացրել Ջրածորի ամրոց-բնակավայրում: Արդյունքում բացահայտվել են որոշակի համադրելի իրողություններ Շիրակի՝ Ք.ա. IX-VIII դդ. իրարից հեռու տեղադրված բնակավայրերում: «Ջրածորի N 5 կացարանի տափանված հատակի վրա բացվել են սաջ և աղորիքներ: Նույն տեղում հայտնաբերվել է հոր՝ լցված Ք.ա. IX-VIII դարերին բնորոշ առարկաներով: Պատկերը նույնն է Ազատանի ամրոցի պարսպին կից համաժամանակյա կացարանում և Շիրակավանի ամրոցում: Նման ընդհանրությունների առկայությունը տարբեր հուշարձաններում թույլ է տալիս եզրակացնել, որ Ք.ա. VIII դ. երկու ամրոցները և բնակավայրերը ենթարկվել են հարձակման: Եթե Ազատանի բնակավայրում այն արտահայտվել է խոշոր հրդեհով, ապա Ջրածորի ամրոց-բնակավայրում և Շիրակավանի ամրոցում հայտնաբերվել են ուրարտական ջարդված և ծոված գեներ, պարսպի մեջ մտած նետասլաքներ: Այս իրողությունների համադրումը Շիրակում գտնվող ուրարտական երկու արձանագրությունների տվյալների հետ թույլ է տալիս դիտարկել ուրարտական գործերի՝ հյուսիսից հարավ-արևելք և հարավ-արևմուտք, այնուհետև Ախուրյան գե-

տի ավագանով դեպի Արարատյան դաշտ շարժման ուղությունները», - նշեց գիտական խմբի ղեկավար, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Արմեն Հայրապետյանը:

Ըստ նրա՝ Ջրածորի և Ազատանի պեղումներով հնարավորություն է ստեղծվել հետևելու Շիրակում Ք. ա. IX-VIII դարերում տեղի ունեցած քաղաքական, ռազմական



տեղաշարժերին: Ուրարտուի արքա Արգիշտի Ա-ի օրոք դեպի Երիախի երկիր կատարված ռազմական գործողությունների երթուղին, ըստ գրավոր աղբյուրների, նշնարվում էր, սակայն բացակայում էին դրանց հնագիտական հիմնավորումները: Շիրակի Ք. ա. 1-ին հազարամյակում տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադրության հետազոտությունը հնարավորություն է տալիս հետևելու ուրարտական պետության ընդարձակման տրամաբանությանը: Այս առումով, բացի հնագիտական նշանակությունից, տվյալներ են կուտակվում նաև ուրարտագիտության համար:

Ջրածորի հուշարձանի հնագիտական հետազոտությունները սկսվել են «Շիրակի պաշտպանական կառույցների հետազոտություն» թեմատիկ ծրագրի շրջանակներում: Այնուհետև արշավախումբը գործել է Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի և Հալլեի Մարտին Լյութերի անվան համալսարանի արշավախմբի համատեղ ֆինանսավորմամբ:

Ջրածորի և Ազատանի ամրոց-բնակավայրերի պեղումների արդյունքների մասին հոդվածներ, հաղորդումներ են տպագրվել հայկական և արտասահմանյան պարբերականներում:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**



# ԿԱՆԱՆՅ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄԻԱՄՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ԽՈՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՀՀ ԳԱԱ համակարգի կանանց նվիրված այս հրապարակման առիթը ոչ միայն կանանց և մայրության միամսյակն է, այլև ցանկությունը՝ ԳԱԱ կազմավորման 80-ամյա հոբելյանին ընդառաջ առաջին անգամ փորձել ուրվագծել այն մեծ ու շնորհակալ դերակատարումը, որ ունեն կանայք ակադեմիական համակարգում:

Անցած տասնամյակների ընթացքում գիտության տարբեր բնագավառներում անջնջելի հետք են թողել մեր անվանի կին գիտնականները, որոնց ծանրակշիռ վաստակն արժանացել է նաև միջազգային ճանաչման:

Նրանք գիտական ակնառու հաջողությունների են հասել հատկապես քիմիայի բնագավառում: Նրանցից հիշարժան են ԳԱԱ ակադեմիկոսներ Արաքսի Բաբայանը, Աիդա Ավետիսյանը, Մայա Ինճիկյանը, ԳԱԱ թղթակից անդամներ Վերգինե Թառայանը, Դարյա Բաբայանը (միկրոգիա, ֆիտոպաթոլոգիա) և ուրիշներ: Փորձարարական ֆիզիկայի ոլորտում ԳԱԱ ակադեմիկոս Թինա Ասաթյանի ուսումնասիրություններն արժանացել են Լենինյան մրցանակի: ԳԱԱ կազմում ընդգրկված են եղել նաև մեծանուն գրողներ Մարիետա Շահինյանը (ԳԱԱ թղթակից անդամ) և Սիլվա Կապուտիկյանը (ԳԱԱ ակադեմիկոս)՝ գրականության զարգացման գործում ունեցած վաստակի համար:

Գիտությանն անմնացորդ ծառայելու լավագույն օրինակ է ԳԱԱ իսկական անդամներ Հետի Գիտության վաստակավոր գործիչ Լիա Օսիպյանի (բուսաբանություն և բույսերի ֆիզիոլոգիա), Իրմա Վարդանյանի (քիմիական ֆիզիկա), ԳԱԱ թղթակից անդամներ Էլմա Պարսամյանի (աստղաֆիզիկա), ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Անիտա Դուլխանյանի (գրականագիտություն) և ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Սեդա Գասպարյանի (լեզվաբանություն) գործունեությունը:

Վերևում թվարկեցինք գիտության նվիրյալների ընդամենը 13 անուն, ինչը փաստում է, որ ԳԱԱ ութսուն տարիների ընթացքում ԳԱԱ իսկական և թղթակից անդամների ընդհանուր թվաքանակում մշտապես անհամեմատ ցածր է եղել և այսօր էլ ցածր է կին գիտնականների մասնաբաժինը: Մինչ օրս ընտրվել է ընդամենը 6 կին ակադեմիկոս, ինչը կազմում է ակադեմիայի ողջ պատմության ընթացքում ընտրված ակադեմիկոսների ընդհանուր թվի ընդամենը 3%-ը: Այս մեծ անհամամասնությունը, բնականաբար, ունի թե՛ օբյեկտիվ և թե՛ սուբյեկտիվ պատճառներ (կնոջ սոցիալական կարգավիճակը և, անկասկած, նաև նրա քիչ մոտիվացված լինելը իր գիտական առաջխաղացմանը հետամուտ լինելու հարցերում): Այնինչ, ԳԱԱ գիտական և գիտակազմակերպչական գործունեության 2022թ. տվյալների համաձայն, կանայք կազմում են գիտական աշխատողների ընդհանուր թվի մոտ 53%-ը: ԳԱԱ իսկական և թղթակից անդամների կազմում կանանց ներկայացվածության հարցը, կարծում ենք, ուշադրության կարժանանա համակարգում սկսված բարեփոխումների ընթացքում:



ԳԱԱ ինստիտուտների տնօրեններ (ձախից աջ) Նաիրա Այվազյանը, Աննա Սատուրյանը, Ալվարո Անտոնյանը և Լիլիթ Սահակյանը

Հաճելի է նշել, որ համակարգում կան նաև կազմակերպչական փայլուն ունակություններով օժտված կին գիտնականներ, ովքեր արդեն իսկ ապացուցել են, որ կանայք կարող են լինել նաև գիտության հմուտ կազմակերպիչներ: Գիտական մեծ ներուժ ունեցող ակադեմիական չորս ինստիտուտների տնօրենների պաշտոններն այսօր վստահված են կանանց՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Սատուրյան (Արվեստի ինստիտուտ), կենսաբանական գիտությունների դոկտոր Նաիրա Այվազյան (Լ. Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտ), կենսաբանական գիտությունների թեկնածու Լիլիթ Սահակյան (Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն) և կենսաբանական գիտությունների թեկնածու Ալվարո Անտոնյան (Հ. Բուհարյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտ): Գիտության առջև ծառացած մեթոդական մարտահրավերների պայմաններում անգամ նրանք կարողանում են արդյունավետ լուծել իրենց կազմակերպությունների առջև դրված խնդիրները:

Դեկավար կանանց հանդիպում ենք նաև ակադեմիական այլ կառույցներում: ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի տնօրենն է բանասիրական գիտությունների թեկնածու

Մայա Գրիգորյանը, իսկ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի ղեկավարը կենսաբանական գիտությունների թեկնածու Էվելինա Դուկայանն է: Երկար տարիներ ԳԱԱ արհմիության միացյալ կոմիտեի նախագահն է այս բնագավառի երախտավոր, կենսաբանական գիտությունների թեկնածու Կիմա Միքայելյանը:

ԳԱԱ ինստիտուտներում քիչ չէ նաև այն կանանց թիվը, ովքեր գիտական աշխատանքը զուգակցում են վարչական աշխատանքին՝ զբաղեցնելով ինստիտուտների փոխտնօրենների, գիտքարտուղարների, բաժինների և լաբորատորիաների վարիչների ու այլ ստորաբաժանումների ղեկավարների պաշտոններ:

Ընդհանուր առմամբ ԳԱԱ համակարգում աշխատում է ավելի քան 1750 կին, ինչը կազմում է ընդհանուր աշխատակիցների թվի մոտ 52%-ը: Նրանցից 55-ը գիտության դոկտորներ են, իսկ 355-ը՝ թեկնածուներ: Բացի գիտական աշխատանքից, կանայք հիմնականում ընդգրկված են ինստիտուտների լաբորատորիաներում, գրադարաններում, հաշվապահական, համակարգչային և տեխնիկական ապասարկման աշխատանքներում: Իրենց աշխատանքին նվիրված կանանց թիվը զգալի է նաև ակադեմիական այլ կառույցներում՝ ԳԱԱ նախագահության աշխատակազմ, Հիմնարար գիտական գրադարան, Միջազգային գիտակրթական կենտրոն և գիտական հանդեսների 17 խմբագրություններ:

Գիտական զգալի ներուժ ունեն մեր համակարգի երիտասարդ գիտնականները, որոնց շարքերում քիչ չեն խոստումնալից երիտասարդ կանայք և ասպիրանտները: Նրանք ակտիվորեն ներգրավված են նաև երիտասարդ գիտնականների համակադեմիական միավորման և ինստիտուտային խորհուրդների աշխատանքներում: Վերջերս ԳԱԱ երիտասարդ գիտնականների միավորման նախագահ է ընտրվել բանասիրական գիտությունների թեկնածու Սիրանուշ Հովհաննիսյանը:

Ներկայումս ԳԱԱ մագիստրատուրայում և ասպիրանտուրայում սովորողների ավելի քան 60%-ը նույնպես կանայք են:

Առանձնահատուկ պետք է ընդգծել մեր գիտական կազմակերպություններում աշխատող՝ կրտսեր գիտաշխատողից մինչև գլխավոր մասնագետի հաստիքները զբաղեցնող կանանց գործունեությունը, ովքեր, չնայած ընտանեկան հոգսերին ու պարտականություններին, որպես մեր մեծ դպրության համեստ մշակներ, նվիրումով ծառայում են գիտությանը: Պետք է ամեն կերպ աջակցել, խրախուսել և ժամանակին համարժեք գնահատել նրանց արդյունավետ աշխատանքն ու գիտական վաստակը:

Գարնանային այս միանշալկի առթիվ շնորհավորելով բոլոր կանանց՝ մաղթում ենք քաջառողջություն, երջանկություն, հաջողություններ աշխատանքում և անձնական կյանքում:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Տիրուհի Գյուլնազարյանը ծնվել է Նախիջևանի Կզմուտ գյուղում՝ մոտավորապես 1850-ական թվականներին կզմուտցի երեւելի մի մարդու՝ Գյուլնազարի ընտանիքում, նրա յոթ դուստրերից մեկն էր: Ամուսնացել է Կզմուտ գյուղի քահանա Տեր-Սահակի որդու՝ Տեր-Եղիշեի հետ: Նրանց ամուսնությունից ծնվել են չորս զավակները՝ երկու դուստրերը՝ Աննա (Անիկա) ու Յուլիան (Անուփիա), և երկու որդիները՝ Լևոն ու Գարեգինը: 1888 թվականին, երբ երեխաներից ավագը՝ Աննան, տասնմեկ տարեկան էր, իսկ

դառնալ Հյուսիսային Կովկաս, սակայն ոչ թե Արմավիր, այլ Վլադիկավկազ (Օրջոնիկիձե): Հետագայում նրանք ստիպված են լինում ապրել Ախալցխայում, Թիֆլիսում, և միայն Ստալինի մահից հետո է թույլատրվում վերադառնալ Հայաստան:

1937 թվականի աշնանը Լևոնի ավագ դուստրը՝ Օլյան, Հայաստանից գալիս է Վլադիկավկազ և տառին հյուր տանում Դիլիջան: Սակայն մի քանի ամիս անց Տիրուհու առողջությունը խիստ վատանում է, և 1938 թվականի փետրվարի 21-ին նա վախճանվում է:

ված մամակները, ինչպես նաև հայտնի «Առյուծածին մայրեր», «Բանտային գրառումներ» երկերը, մոր պայծառ կերպարը միշտ ուղեկցել է որդուն:

Մասնավորապես նշանավոր «Բանտային գրառումներում» տեղ են գտել մորը նվիրված հետևյալ հուզիչ տողերը.

«Կալանաւոր էի ցարի օրով, և մայրս ամեն կիրակի ինձ այցի կու գար հեռաւոր գիւղից. կու գար ուղղով:

Իր միոբեական վշտից ազդուած՝ կը զայրանայի, որ ինձ համար կը նահատակէ իր անձը: «Ի՞նչ, կը պատասխանէր, կա՞ռք նստեմ, կա՞ռք վայելեմ, երբ շղթաների և զրկանքների մէջ ես դու»...

«Դեպի քաղաք ճամբայ ընկնելուց առաջ, կը պատմէին քոյրերս, մայրիկը հսկումի է կանգնում Տիրամօր առջև, արիւն լալիս, կուրծքը եկեղեցու քարերին քսում, մինչև որ արիւնեն ստիկները. խեղճ կին՝ կուզէ, որ քարերն էլ զգան իր ցաւը»: Ահա՛ մայրը, որի նման են բոլոր հայ մայրերը: Իսկ իր պաշտելի Նիցշեի «Ամենագեղեցիկն աշխարհում իմ մոր աչքերն են» արտահայտության ոգեշնչմամբ Նիցշեն ասել է. «Ամենաբարին աշխարհում իմ մօր դեմքն է»...

Կյանքի վերջին տարիներին եղբորը գրած մամակներում Սպարապետը բազմիցս խնդրել է իր փոխարեն այցելել մոր շիրմին: 1952-ին գրված և հասցեատիրոջը չհասած մամակներում կան այսպիսի տողեր. «Եթէ դեռ ապրում է սիրելի մայրս՝ համբուրիր ձեռքը, իսկ եթէ մեռած է՝ գերեզմանը...» կամ՝ «Ձգում են, թէ սիրելի մայրս մեռած է, իմ կողմից համբուրիր գերեզմանը»:

Ահա այն ամենը, ինչ հայտնի է մեզ մեծ Նիցշեի մոր՝ Տիրուհի Տեր-Հարությունյան-Գյուլնազարյանի մասին:

Արտակ ՎԱՐԴԱՆՅԱՆ  
Բանասիրական գիտությունների  
թեկնածու

## ԱՌՅՈՒԾԱԾԻՆ ՄԱՅՐԸ

Իրենց զավակներով պիտի ծանաչել ու գնահատել կանանց: Գարեգին Նժդեհ

կրտսերը՝ Գարեգինը՝ երկու, կյանքից հեռանում է ընտանիքի հայրը: Գարեգին Նժդեհի քրոջ դստեր՝ 1904 թվականին ծնված Հայկունուզ Գրիգորյանի վկայությամբ Տեր-Եղիշեին թունավորել էին գյուղական հարսանիքներից մեկի ժամանակ:

Որբացած երեխաներին խնամել է մայրը նրանց հորեղբայր Եփրեմի աջակցությամբ: Գարեգինի ռազմական բարձրագույն կրթությունը ստանալուն նպաստել է հորեղբոր տղան՝ Յուլակը, որ ցարական բանակի սպա էր: Անճան ամուսնացել է Կզմուտում, Յուլինե-Անուփիան՝ Թիֆլիսում: Տիրուհին ապրել է ավագ որդու՝ Լևոնի հետ, որն ուսուցիչ էր նախ՝ ծննդավայրում, հետո՝ Ջուղայում, ապա՝ Արմավիրում:

1920-ական թվականներին, երբ Նժդեհն արդեն արտասահմանում էր, և սկսվել էին համայնավարական հալածանքները, Լևոնի ընտանիքը մոր հետ Արմավիրից աքսորվում է Սիբիր՝ Կրասնոյարսկի երկրամաս: Երեք տարի հետո նրանք թույլատրվում է վերա-

ճանվում է:

Նժդեհի բարեկամուհի Լիլյա Սաժունյանը վկայում էր, որ Տիրուհի Տեր-Հարությունյանը թաղվել է Դիլիջանի քաղաքային գերեզմանատան հին հատվածում, սակայն գերեզմանի տեղը հայտնի չէր:

2001 թվականին՝ Գարեգին Նժդեհի ծննդյան 115-ամյակի օրերին, «Նախիջևան» հայրենակցական միության նախաձեռնությամբ, Տավուշի մարզպետարանի և Դիլիջանի քաղաքապետարանի աջակցությամբ Դիլիջանի գերեզմանատան հին հատվածում հայտնաբերվեց Սպարապետի մոր գերեզմանատեղին, հանդիսավոր արարողությամբ մոր տապանաքար դրվեց: Եվ այսօր մեծ գաղափարախոսի, իմաստասերի և զորավարի մոր շիրմն իրավամբ ազգային մոր ուխտատեղի է դարձել:

Գարեգին Նժդեհը՝ մայր հայրենիքի նվիրյալ զինվորն ու զորապետը, հատուկ տարիքում համարյա չի ապրել մոր հետ, սակայն, ինչպես վկայում են նրա պահպան-

Նրա լուսանկարն առաջին անգամ տեսա 1990 թվականին Գարեգին Նժդեհի զարմիկ Վազգեն Տեր-Հարությունյանի տանը՝ հին սնդուկանման մեծ ճամպուրկում տեղավորված մասունքների՝ հագուստների, իրերի, փաստաթղթերի ու նամակների մեջ: Իսկույն ուշադրությունս գրավեց խորհրդավոր ու առիքնոջ դեմքով, հպարտ կեցվածքով, քիչ խստահայաց, բայց և աչքերում բարություն ու ներողամտություն անթեղած հայուհու լուսանկարը... այն կնոջ, որ աշխարհ է բերել, մեծացրել ու դաստիարակել առասպելական Գարեգին Նժդեհին...

Հարազատների վկայությամբ Սպարապետի մոր անունը հաթայի էր. արևելյան ծագումով այդ անձնանունն անցյալ դարերում դեռևս ընդունված էր նաև հայերիս մեջ: Սակայն Նժդեհի ձերբակալության թերթիկի՝ ծնողներին վերաբերող կետում մոր անվան դիմաց լրացված է Տիրուհի անունը, որ, հավանաբար, մկրտության անունն է, կամ էլ այդպես են դիմել որպես հոգևորականի կնոջ:

# ԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԸԻՄՆԱՇԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Ս/թ. մարտի 15-16-ը ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ «Կովկասի պատմության հիմնահարցեր» միջազգային գիտաժողովը՝ նվիրված անվանի պատմաբան, հայագետ-կովկասագետ Պավել Չոբանյանի (1948-2017) ծննդյան 75-ամյակին: Գիտաժողովի առաջին օրվա աշխատանքները մեկնարկեցին և շարունակվեցին ՀՀ ԳԱԱ նախագահության շենքի միստերի դահլիճում, իսկ երկրորդ օրվա աշխատանքները շարունակվեցին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի միստերի դահլիճում:


Գիտաժողովը կազմակերպվել էր ՀՀ ԳԱԱ արևելագիտության և պատմության ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի համատեղ ջանքերով: Գիտաժողովի բացմանը ներկա էին և ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Սինասյանը, որոնք արժևորեցին պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պավել Չոբանյանի գիտական վաստակը: Գիտաժողովին ներկա էին և շնորհակալական խոսքով հանդես եկան նաև Պավել Չոբանյանի ընտանիքի անդամները:

Վաստակաշատ գիտնական



նը հեղինակել է 150-ից ավելի գիտական հրապարակումներ: Նա նաև երկու տասնյակ գիտական աշխատությունների խմբագիր է: Պ. Չոբանյանի գիտական հետազոտությունները նվիրված են հայոց պատմության, հայ-վրացական, հայ-ռուսական հարաբերությունների, վրացական ուղեգրությունների ուսումնասիրությանը: Նրա գրչին են պատկանում «Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին» և «Հայ-ռուս-վրացական հարաբերությունները ԺՆ դարի երկրորդ կեսին» հիմնարար մենագրությունները: Նա թարգմանաբար հրատարակել է Ա. Շանիձեի «Հին վրացերեն լեզվի քերականություն» աշխատությունը (Հ. Մարգարյանի հետ համատեղ): 1990 թ. լույս է տեսել Պ. Չոբանյանի մասնակցությամբ կազմված «Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դարի երկրորդ կեսին (1760-1800 թթ.)» փաստաթղթերի ժողովածուն, 1999 թ. նրա առաջաբանով և աշխատասիրությամբ վերահրատարակվել են Մակար Բարխուդարյանի «Աղվանից երկիր և դրացիք» ու «Արցախ» տե-

յուններ և միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհրդի անդամ էր, եղել է նշված մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար: Նա նաև ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի անդամ էր:



ղագրական աշխատություններ:

Պրոֆ. Պ. Չոբանյանը վարել է նաև բեղմնավոր գիտամանկավարժական աշխատանք: Նա երկար տարիներ դասախոսել է «Դավիթ Անհաղթ», Խ. Աբովյանի անվան մանկավարժական, Երևանի պետական համալսարաններում, Մխիթարյան միաբանության Երևանի վարժարանում: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել են մեկ տասնյակ թեկնածուական ատենախոսություններ, եղել է բազմաթիվ թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների ընդդիմախոս:

Պ. Չոբանյանը ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում գործող «Քաղաքական գիտութե-

Հեղինակավոր հետազոտողն արտասահմանյան մի շարք երկրներում մասնակցել է միջազգային գիտաժողովների, զեկուցումներով հանդես եկել Արևելագետների 35-րդ (Բուդապեշտ) և 37-րդ (Մոսկվա) համաշխարհային կոնգրեսներում:

Պ. Չոբանյանը պարգևատրվել է ՀՀ ՊՆ «Գարեգին Նժդեհ» մեդալով (2010), ՌԴ «150 лет со дня рождения К. Мечиева» (2010), «20 лет провозглашения Нагорно-Карабахской Республики» (2011) հուշամեդալներով:

Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան 31 մասնակից, որոնցից 13-ը արտերկրից էին (Վրաստան, Ռուսաստան, ԱՄՆ, Իրան, Հինաստան): Գիտաժողովի առկա միստերի ըն-

թացքում հայ-վրացական հարաբերությունների, Կովկասի պատմության տարաբնույթ հարցերի շուրջ իրենց հետազոտությունների արդյունքները ներկայացրին Վրաստանից ժամանած ութ մասնակիցները (Իվանե Ջավախիշվիլի անվան թբիլիսիի պետական համալսարան, Պատմության և ազգագրության ինստիտուտ, Չոբանյանի ազգային կենտրոն, Արևելագիտության ինստիտուտ): Եղան հետաքրքրական զեկուցումներ Հայաստանի և Վրաստանի պատմության վաղ միջնադարի, նորագույն շրջանի, Արևելյան Այսրկովկասի էթնոքաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության զանազան խնդիրների թեմաներով:

Նիստերից մեկը տեղի ունեցավ համացանցի զույմ հարթակով, որի ժամանակ իրենց զեկուցումները ներկայացրին գիտաժողովի այն մասնակիցները, որոնք նախընտրել էին գիտաժողովին հեռավար մասնակցությունը (ԱՄՆ-ից՝ պրոֆեսոր Սեպուհ Ասլանյանը, Ռուսաստանի Ղազնուքունից՝ Լուսինե Ղուշչյանը, Իրանից՝ Ժյուլիետ Մեշքանբախյանը և Վրաստանից՝ Մարիամ Բեթիտաշվիլին):

Գիտաժողովի զեկուցումների մյուսերի ժողովածուն տպագրվել էր նախապես և բաժանվել մասնակիցներին:

Գիտաժողովը կազմակերպվել էր ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի «21T-6A163» թեմատիկ ծրագրի շրջանակներում:

**ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ**

## Դրական հեռանկարներ քաղցկեղային բջիջները ոչնչացնող դեղամիջոցի ստեղծման հետազոտություններում

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի կենսաինժեներիայի և կենսաբժշկական հետազոտությունների լաբորատորիաները Բելառուսի ԳԱԱ ֆիզիկայի ինստիտուտի «Մոլեկուլների ֆոտոնիկայի և ֆոտոքիմիայի» կենտրոնի հետ համագործակցությամբ իրականացնում են հետազոտություններ՝ ստեղծելու այնպիսի մոր դեղամիջոց, որով ոչնչացնեն միայն քաղցկեղային բջիջները՝ չվնասելով առողջները:

«Հայտնի է, որ քաղցկեղային բջիջներում ֆոլաթթվի (վիտամին B<sub>9</sub>) ռեցեպտորների քանակը, որոնք աշխատում են անտեմալի սկզբունքով, 100-300 անգամ ավելի շատ է, քան առողջ բջիջներում: Օգտագործելով այս հանգամանքը՝ մեր կողմից ֆոլաթթվի (ՖԹ) հետ կոմպլեքսավորվել են ցինկ մետաղ պարունակող պորֆիրիններ (ֆոտոզգայուն բնության մեջ գոյություն ունեցող միացություններ): Ստացված կոմպլեքսները կապվում են միայն քաղցկեղային բջիջների ֆոլաթթվի ռեցեպտորների հետ թիրախային սկզբունքով և, ներթափանցելով քաղցկեղային բջիջների մեջ, լազերի միջոցով լուսավորումից հետո ոչնչացնում են միայն քաղցկեղային բջիջները: Այդ կոմպլեքսներից ընտրել ենք մյուսերի ամենաբարձր հարաբերակցությամբ կոմպոզիտը, որում հարաբերակցությունը հասնում է 20/1-ի: Կոմպոզիտների հատկություններն ուսումնասիրվել են տարբեր pH-ի և NaCl կոնցենտրացիայի պայմաններում, որոնք բնորոշ են քաղցկեղի համար: Նման կոմպո-

զիտների ստացման մատչելիությունը հնարավորություն է ընձեռում դրանք կիրառելու ուռուցքների թիրախային ֆոտոդինամիկ թերապիայում: Պորֆիրինները կարող են օգտագործվել նաև բակտերիաների, սնկերի, խմորիչների և վիրուսների դեմ պայքարում», - ասաց գիտական խմբի ղեկավար, ինստիտուտի կենսաինժեներիայի լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու Գրիգոր Գյուլխանդանյանը:

Հետազոտությունն իրականացվում է «Ֆոլաթթվի և կատիոնային պորֆիրինների հիմքով մոր վեկտորային կոմպոզիտներ ուռուցքների ֆոտոդինամիկ թերապիայի համար» ծրագրի շրջանակում, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

«Հետազոտությունն ունի և՛ հիմնարար, և՛ կիրառական նշանակություն: Հետազոտության ավարտից հետո ամենաակտիվ միացությունը (դեղամիջոցը) կիրառվելու և փորձարկվելու է խոշոր կենդանիների վրա, որպեսզի հետազոտում կիրառվի մարդու քաղցկեղային հիվանդությունների դեպքում», - ասաց Գրիգոր Գյուլխանդանյանը:

Հետազոտական աշխատանքում ընդգրկված են ինստիտուտի կենսաինժեներիայի լաբորատորիայի 3 երիտասարդ գիտաշխատող, ինչպես նաև կենսաբժշկական հետազոտությունների լաբորատորիայի գիտաշխատողներ: Բացի այդ, այս թեմայով հետազոտություններ են կատարել 3 ուսանողներ՝ բակալավրներ և մագիստրոսներ:



## ԱՐԺԵ-ԲԱՎՈՐ ԲԱՌԱՐԱՆ

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը լույս է ընծայել «Բայագետի բարբառի բառարան» աշխատությունը, որի հեղինակն է ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր Վիկտոր Կատվայանը:


«Բայագետի բարբառի բառարան» աշխատանքով հանրությանն առաջին անգամ ներկայացվում է Բայագետի բարբառի բառապաշարը: Բառարանն ընդգրկում է բարբառի բառային շուրջ 8000 միավոր, որոնց մի մասը հավաքվել է նաև Գավառի տարածաշրջանի բնակավայրերում կատարված դաշտային աշխատանքների ընթացքում: «Բառարանում ներկայացված հետաքրքրական շերտերից են գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատները, արդի գրական հայերենում ոչ գործածական գրաբարյան շրջանի բառերն ու բառաձևերը, փոխառյալ բառերը, միայն Բայագետի բարբառում դիտված բառերը, յուրօրինակ բաղադրությունները, իմաստափոխված բառերը, դարձվածքները», - ասում է Վիկտոր Կատվայանը: Նա նշում է, որ բառարանում հետաքրքրական մորություն է այն,

որ հաճախ իրար հաջորդող բառերի համար բերված նմուշները կապակցված են իրար հետ և պատումներ են ձևավորում: Բարբառային խոսքը ներկայանում է կենդանի գործածությամբ:

Բառարաններում բարբառային բառապաշարի արտացոլումը միայն լեզվաբանական խնդիրներ չի լուծում: Այդ բառապաշարն արտացոլում է բարբառակիր հանրության աշխարհայացքը, պատկերացումները, կենցաղը, անցյալն ու ներկան:

Բառարանն օգտակար կլինի լեզվաբաններին, բարբառագետներին, ազգագրագետներին, բանասիրության մասնագետներին, կարող է օգտագործվել բուհական դասընթացներում, շտեմարաններում: Աշխատության ստեղծումն ու հրատարակումն իրականացվել են ինստիտուտի բազային ֆինանսավորմամբ՝ «Հայ բարբառների ուսումնասիրություն» թեմայի շրջանակում:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**



ՓԱՐՈՎՈՆ ՓԱՐՈՎՈՆ

2022թ. հոկտեմբերի 6-7-ը կազմակերպեց «Արդի հայ թատրոն. նոր միտումներ և հիմնախնդիրներ (1990-2022)» միջազգային գիտական նստաշրջանը, որը համախմբեց ժամանակակից հայ թատրոնի և դրամատուրգիայի ուսումնասիրության հարցերով զբաղվող գիտնականներին և թատերաշխարհի ներկայացուցիչներին Հայաստանից, Ռուսաստանից, Ֆրանսիայից ու Լեհաստանից: Գիտական նստաշրջանի զեկուցումների ժողովածուն (անգլերեն լեզվով) առաջիկայում կիրատարակվի Վարշավայում:

Հայ ժամանակակից արվեստի ուսումնասիրության շրջանակներում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի և Հունանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահության որոշմամբ 2022-ին «Նախապետ» հրատարակչու-

րած աշխատանքն ամբողջացնող առաջին նմուշն է:

2021 թ. փետրվարին նկարչի նախածեռնությամբ ստեղծվեց տողերիս հեղինակի դիմանկարը, որին վիճակված էր դառնալ Փարավոն Միրզոյանի ստեղծած լավագույն դիմանկարը: Թեև նկարիչը վրձնել ու քանդակել է հայ մշակույթի ներկայացուցիչների շատերին՝ իր տաղանդավոր ժամանակակիցներ Համո Սահյանին, Հովհիկ Հովսեփյանին, Ջաքար Խաչատրյանին, Կարեն Ջանիբեկյանին, Տիգրան Մանուկյանին, Դանիել Երաժշտին և այլոց, սակայն «Խոհեր: Աննա Ասատրյանի դիմանկարը» Փ. Միրզոյանի դիմանկարների պատկերասրահում գիտության աշխարհի ներկայացուցիչ կերպարին անդրադարձի առաջին փորձն էր: Եվ պատահական չէ, որ հենց «Խո-

հենց Արարատ Աղասյանը:

Պատկերագրի եռալեզու՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, վերլուծական հոդվածի հեղինակն է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական քարտուղար, արվեստագիտության թեկնածու Մարգարիտա Քամալյանը: Երիտասարդ հետազոտողը խորապես ուսումնասիրել է նկարչի դիմանկարչական արվեստը և եզրակացրել, որ «Փարավոն Միրզոյանի ստեղծագործություններն արդիական են և միաժամանակ դասական: Դրանցում մշտապես առկա են կենսահաստատ ուժը և հումանիստական պաթոսը»:

Արմեն և Մարիաննա Տիգրանյանների մեկենասությամբ հրատարակված պատկերագրում ներկայացված են նկարչի դիմանկարների, զուգապատկերների և խմբակային դիմանկարների, ինչպես նաև ինքնադիմանկարների վերաստությունները (լուսանկարները՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Մանե Մկրտչյանի և ՀԱՊ աշխատակից Քրիստինե Սարգսյանի): Պատկերագրում տեղ են գտել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի աշխատակիցների դիմանկարների վերաստությունները ևս. խոսքը «Արվեստաբան Մ. Ստեփանյանի դիմանկարը» (2002, 120x101), «Խոհեր: Աննա Ասատրյանի դիմանկարը» (2021, 130x100, առաջին անգամ հրատարակվել է «Ռոսլին» կերպարվեստի հանդեսի 2021 թ. համարներից մեկում) և «Մարիաննա և Աննա Տիգրանյաններ» (2022, 130x120, առաջին անգամ հրատարակվել է «Արվեստագիտական հանդեսի» 2022 թ. 1-ին համարի դարձերեսին) մեծադիր կտավների վերաստություններին մասին է, որոնցից վերջին երկուսը, ինչպես նաև «Մարիան Ստեփանյանի դիմանկարը» (2022, 90x100) տեղ գտան նաև հիշյալ ցուցահանդեսի կատալոգում:

Անշուշտ, «Դիմանկարը Փարավոն Միրզոյանի արվեստում» պատկերագիրը կարևոր հանգրվան է հայ ժամանակակից կերպարվեստի ուսումնասիրության ասպարեզում և անհրաժեշտ քայլ անվանի նկարչի ստեղծագործության համարահաշվառման գործում:

Հ.Գ. Ցուցահանդեսում առաջին անգամ ցուցադրվեց «Խոհեր: Աննա Ասատրյանի դիմանկարը» կտավը:

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն,

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

## «ԴԻՄԱՆԿԱՐԸ ՓԱՐԱՎՈՆ ՄԻՐԶՈՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ»

2023 թ. մարտի 10-ին Հայաստանի ազգային պատկերասրահում տեղի ունեցավ ՀՀ ժողովրդական նկարիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, Հայաստանի ազգային պատկերասրահի երկարամյա տնօրեն (2002-2014), ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ Փարավոն Միրզոյանի հոբելյանական ցուցահանդեսը: Հընթաց ցուցահանդեսի բացման, որը տեղի ունեցավ որմնանկարների դահլիճում, կայացավ «Դիմանկարը Փարավոն Միրզոյանի արվեստում» գրքի շնորհանդեսը: Շնորհանդեսի ավարտին անվանի գեղանկարչի ստեղծագործությունների տպավորության տակ ծնված իր դաշնամուրային պիեսի կատարմամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, տաղանդավոր կոմպոզիտոր, երգեհոնահար ու դաշնակահար Հովհաննես Մանուկյանը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական հետազոտությունների կարևոր ուղղություններից է հայ ժամանակակից արվեստի ուսումնասիրությունը, որի ուղղությամբ 2022 թվականին ևս իրականացվել են զգալի աշխատանքներ:

Այսպես, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը Վարշավայի համալսարանի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի թատրոնի և դրամայի հետազոտությունների կենտրոնի և Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի հետ համատեղ

յունը լույս ընծայեց «Դիմանկարը Փարավոն Միրզոյանի արվեստում» պատկերագիրը:

Նշանակալի է Լեհիմգրադի Ի.Ռեպինի անվան գեղարվեստի, քանդակագործության և ճարտարապետության ինստիտուտի շրջանավարտ, բազմատաղանդ գեղանկարիչ և գծանկարիչ Փարավոն Միրզոյանի ներդրումը հայ կերպարվեստի պատմության մեջ: Նրա ստեղծագործությունները ներկայացված են ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի թանգարաններում, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Լեհաստանի, Լիտվայի, Բելառուսի, Սիրիայի, Լիբանանի, Հնդկաստանի և Եգիպտոսի մասնավոր հավաքածուներում:

Բազմաժանր նկարիչը դիմանկարչական ժանրին անդրադարձել է իր ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում: Պատկերագրում ներկայացված են նկարչի դիմանկարչական ժանրի լավագույն նմուշները 50-ամյա ընդգրկմամբ՝ 1972-ով թվագրված «Ելենա» յուղանկարից մինչև 2022-ին վրձնած «Հյուրը Ռուսաստանից» և «Օպերայի երգչուհի» յուղանկարները: Վերջին տարիներին գեղանկարիչն իր ուժերն է փորձել նաև քանդակագործության ասպարեզում. պատկերագրում տեղ են գտել նրա կերտած դիմաքանդակներից մի քանիսը:

Իսկ ինչպե՞ս ծնվեց Պատկերագիրը, որը հայ կերպարվեստում որևէ նկարչի՝ դիմանկարչության ասպարեզում կատա-

հեր: Աննա Ասատրյանի դիմանկարի» ստեղծումն առիթ դարձավ, որպեսզի նոր և նորագույն շրջանների հայ (և ոչ միայն հայ) կերպարվեստի լավագույն գիտակ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը հանդես գար շատ կարևոր առաջարկությամբ (ի դեպ, կտավը ստեղծվեց հենց նրա աչքի առաջ): Նա Փարավոն Միրզոյանին խորհուրդ տվեց հավաքել, ի մի բերել իր վրձնած դիմանկարներն ու ինքնանկարները և հրատարակել մեկ ալբոմում: Փ. Միրզոյանը խորհուրդն ընդունեց մեծ ոգևորությամբ: Բնականաբար, նախագծի ղեկավարը դարձավ

## ՀՀ ԳԱԱ-ում մեկնարկեց «Հայաստանի հեռանկարներն արդի ուռուցքաբանության թերանոստիկայում»՝ APRICOT 2023 միջազգային գիտաժողովը



Սույն թվականի մարտի 1-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Հայաստանի հեռանկարներն արդի ուռուցքաբանության թերանոստիկայում»՝ APRICOT 2023 միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել են ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆի-

զիկայի բաժանմունքը և ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը: Գիտաժողովին մասնակցում են ֆիզիկոսներ, քիմիկոսներ և կենսաբաններ Հայաստանից, ԱՄՆ-ից, Հունաստանից, Հնդկաստանից: Գիտաժողովի հիմնական նպատակներից է ստեղծել գիտական

համագործակցության նոր հարթակ:

ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Արամ Պապոյանը գիտաժողովի մասնակիցներին փոխանցեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանի ողջույնի ուղերձը. «Ակադեմիկոս Աշոտ Սաղյանը բարձր է գնահատում միջգիտակարգային բնույթի աշխատանքները՝ հատկապես ուղղված կյանքի մասին գիտություններին և առողջապահական խնդիրներին: ԳԱԱ նախագահը հաջողություն է մաղթում գիտաժողովի աշխատանքներին»:

Գիտաժողովի հիմնական թեման է «Մագնիսական մանոմյութերը կենսաբաժնային մեջ. սինթեզ և ֆունկցիոնալացում»։ «Այս ծրագիրն ունի լուրջ հեռանկարներ, քանի որ կենսաբաժնային մեջ մանոմյութերի կիրառումն առաջատար ուղղություններից է։ Աշխատանքները նվիրված են ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում սինթեզված մանոմասնիկների օգտագործմանը քաղցկեղի բուժման եղանակներում։ Գո-

յություն ունի «մագնիսական գերտաքացում» եղանակը, որը թույլ է տալիս թիրախավորել ու ոչնչացնել քաղցկեղային բջիջները։ Մեր գործընկերները Գերմանիայից բնութագրում են մեր կողմից սինթեզված այդ մանոմասնիկների մագնիսական հատկությունները, իսկ Սալունիկի Արիստոտելի համալսարանում իրականացվում են մագնիսական գերտաքացման մախնական աշխատանքները։ Ստացված արդյունքները հեռանկարային են», - ասաց Արամ Պապոյանը:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին մինչև մարտի 4-ը: Ձեկուցումներով հանդես եկան գիտնականներ Հայաստանից և արտերկրից: Պլենար զեկուցումներով հանդես եկան պրոֆեսորներ Ալեքսանդր Մուկասյանը (Նոտր Դամի համալսարան, ԱՄՆ), Կարեն Մարտիրոսյանը (Տեխասի Ռիո Գրանդե հովիտ համալսարան, ԱՄՆ), Շիվաջի Փավարը (D.Y. Patil համալսարան, Հնդկաստան) և Մակիս Անգելակերիսը (Սալունիկի Արիստոտել համալսարան, Հունաստան):

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

## ԲԱՌՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԿԱՄԻԿԱԶԵՆԵՐԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945 թթ.) բազմաթիվ լեզուներում շրջանառվում էր ճապոներեն *կամիկաձե* (kamikaze) բառը, որ դարձավ «մահապարտ» բառի հոմանիշը: Ովքե՞ր են կամիկաձեները և ինչի՞ համար էին անդամազուլել մահապարտների բանակին:

Երբ պատերազմի տարիներին ամերիկյան ռազմածովային ուժերը ծնշում էին ճապոնացիներին, վերջիններս, բարձրացնելով իրենց զինվորների մարտական ոգին, ընտրեցին և առաջ քաշեցին կամավոր մահապարտների (օդաչուների), որոնք, հանկարծակի գրոհելով թշնամու ռազմանավերի վրա, ինքնաթիռով պետք է հարվածեին նպատակակետին՝ խորտակելով թշնամական թիրախները, և իրենք էլ կործանվեին դրանց հետ:

Ճապոնացի մահապարտ օդաչուները կոչվեցին, ինչպես նշեցինք, կամիկաձեներ: Kamikaze բառը ճապոներեն նշանակում է «աստվածային քամի»։ ճապոնական մշակույթում «աստվածային քամին» կործանում է թշնամիներին:

Եվ դա գալիս է պատմության խորքերից:

XIII դարի վերջերին Չինգիզ խանի հետնորդները որոշեցին նվաճել ճապոնիան: Շուրջ 50.000-ամոց բանակով և ծովային հզոր նավատորմով մոնղոլները գրոհում են ճապոնական կղզիների վրա: Երկարատև և համառ մարտերն օգուտ չեն բերում մոնղոլներին, իսկ ճապոնացի ռազմիկները թշնամիներին հետ մղել չեն կարողանում:

## ՄՈՒՄԻԱՆԵՐԸ

Երբ 1922 թ. նոյեմբերին եգիպտագետ Յովարդ Քարտերը բացեց Թոթ Ամին Ամոն փարավոնի դամբարանի մուտքի դուռը, աշխարհն ապշեց մ.թ.ա. XIV դարի եգիպտական XVIII դինաստիայի տիրակալի առասպելական հարստության փայլից:

Թոթ Ամին Ամոնի դամբարանի բազմաթիվ սեմյակ-



ներում ամբարված էին եգիպտական արվեստի եզակի նմուշներ՝ պատրաստված մաքուր ոսկուց:

Առանձնակի շացուցիչ էր փարավոնի ոսկյա սարկոֆագը, որի տակ ննջում էր Թոթ Ամին Ամոնի... մումիան: Իսկ ինչ է, ընդհանրապես, մումիան:

Այդ հարցում գիտությունը տալիս է իր մեկնաբանությունը. մումիան մարդու կամ կենդանու դիակ է, որ պաշտպանված է քայքայումից հակամեխիչ և անուշահոտ նյութերով (բալզամով), այն չորացված է և զմռսված հատուկ նյութերով:



Եվ հանկարծ բարձրանում է ամեհի փոթորիկ, որ մոնղոլական նավերը խփելով ափամերձ ժայռերին՝ ջարդուփշուր է անում: Փոթորիկը, որ բարձրացել էր հզոր քամուց, ճապոնացիներն անվանում են *կամիկաձե*, այսինքն՝ «աստվածային քամի», որ բարձրացավ (ճապոնացիների) աստծո հրահանգով, որպեսզի փրկի հայրենի երկիրը թշնամական ոտնձգություններից:

Եվ *կամիկաձե* բառը դարերով մնաց ճապոնացիների հիշողության ծալքերում, մինչև XX դարի կեսերին նրանք չբախվեցին համանման աղետի, որ ժամանակին նրանց «մատուցել էին» մոնղոլները: Այս ամբողջ նրանց սպառնում էին ամերիկյան ռազմանավերը: Կամիկաձեի դերն ստանձնեցին ճապոնացի օդաչուները, որոնք համարվում էին «Աստծո կողմից ուղարկված քամի»:

Այս բառն այլ լեզուների բառային կազմին չի մերվել, չի մտել որևէ օտար լեզվի բառարան և մնացել է սուկ խոսակցական մակարդակում:

Որպես պատմաբան՝ մումիան գործածվում է բազմաթիվ լեզուներում:

Նկատենք, սակայն, որ նրա նախնական իմաստը բնավ կապ չունի «մարդու կամ կենդանու զոհած դիակ» հասկացության հետ: Դե, հիմա տեսնենք, նախապես ինչ իմաստ է ունեցել մումիան, և որ լեզվից է սկսվել նրա «շրջագայությունը»:

Մումիան ստուգաբանական իմաստով հանգում է արաբերեն mumiya բառին, որ նշանակում է «մեղրամոմ, մոմ», այդ իմաստն է արտահայտում նաև պարսկերեն mām և արաբերեն mām և մեղրամոմ՝ նախնական նշանակությունը մեզ համար բացահայտում է արաբական լեզվատարածք՝ միաժամանակ ապրելով իմաստային մոր զարգացումներ: Յմոմ. հայ. մումիա (նաև՝ փիսք. 1. համր, պապանձված, 2. չափազանց միաբարձր վիճակում) և այլն:

Մումիացումը բարձրագույն արվեստ է, գիտական բարձր նվաճում, որին տիրապետել են հին եգիպտացիները:

Լալիկ ԽԱՉՍՏՅԱՆ  
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ՀՀ ԳԱԱ «Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի արևմտահայերենի (0,5 հաստիք) և ընդհանուր և համեմատական լեզվաբանության (1 հաստիք) բաժինների կրտսեր գիտաշխատողի թափուր տեղի համար:**

Դիմողը պետք է ունենա կրթական կամ գիտական աստիճան, տվյալ ոլորտում գիտական աշխատանքներ կատարելու ունակություն:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- ա) դիմում,
- բ) լուսանկար,
- գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,
- դ) ինքնակենսագրություն,
- ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
- զ) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը,

- է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
- ը) տեղեկանք մշտական բնակության վայրից,
- թ) հրատարակված աշխատանքների ցանկ,
- ժ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում),

ժա) բնութագիր վերջին աշխատավայրից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակվելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 56-53-37:

**ՀՀ ԳԱԱ Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտը հայտարարում է մրցույթ «Հյուսվածքաբանական և ձևաբանական հետազոտությունների լաբորատորիայի» վարիչի պաշտոնի թափուր տեղի համար:**

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիները, ովքեր ունեն գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, համապատասխան ոլորտին վերաբերող գիտական տպագրություններ՝ այդ թվում միջազգային գրախոսվող ամսագրերում և առնվազն 10 տարվա գիտական գործունեության փորձ:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում՝ ուղղված ՀՀ ԳԱԱ Լ. Ա. Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրենին,
2. անձնագրի և սոցիալական քարտի պատճենները,
3. երկու լուսանկար, 3x4 չափսի,
4. կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
5. քաղվածք աշխատանքային գրքույկից,
6. ինքնակենսագրություն,
7. բարձրագույն կրթության վկայականի պատճեն,
8. գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հաստատող փաստաթղթերի պատճենները,
9. տպագրված գիտական աշխատությունների ցանկը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերը ներկայացնել ՀՀ ԳԱԱ Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտական քարտուղարին՝ սույն հայտարարության հրապարակման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում՝ աշխատանքային օրերին, ժամը՝ 11:00-ից 15:00:

Հասցեն՝ ք. Երևան, Օրբելի եղբայրների փող. 22, հեռախոս՝ 010270441:

## Ամենա - ամենա....

Աշխարհի ամենաթանկ գովազդը, որը գրանցվել է Գինեսի ռեկորդների գրքում, «Chanel No 5» օծանելիքի գովազդային տեսահոլովակն է, որում նկարահանվել է հանրահայտ հոլիվուդյան կինոաստղ Նիքոլ Քիդմանը: Տեսահոլովակի ընդհանուր արժեքը գնահատվում է մոտ 44 միլիոն դոլար:

Աշխարհի ամենաթանկ կազմակերպությունը «Apple»-ն է. արժեքը գնահատվում է ավելի քան 360 միլիարդ ԱՄՆ դոլար:

Աշխարհի ամենաթանկ սուրճը «Kopi Luwak»-ն է: «Kopi» ինդոնեզերեն նշանակում է սուրճ, իսկ «Luwak»-ը մի ոչ շատ մեծ վայրի կենդանի է, որը սիրում է սնվել սուրճի ծառի հասած բերքով՝ դրանցից ընտրելով լավագույնները: Նա ավելի շատ սուրճ է ուտում, քան կարող է մարսել: Չմարսված հատիկները, անցնելով կենդանու աղիներով, ենթարկվում են

ֆերմենտների ազդեցությանը՝ սուրճին հաղորդելով անկրկնելի համ ու հոտ:

Այս սուրճի մեկ կիլոգրամն արժե 300-400 ԱՄՆ դոլար:

Աշխարհում ամենատարածված կանացի անուրը Աճան է, իսկ տղամարդկանց մեջ ամենատարածվածը Մուհամեդն է: Ամենագործածական ազգանունը Դարբինյանն է՝ տվյալ լեզվի համապատասխան իմաստի բառով և ածանցով, ինչպես Կուզնեցով (ռուսերեն), Կովալենկո (ուկրաիներեն), Սմիթ (անգլերեն), Շմիդտ (գերմաներեն) և այլն:

Եվրոպական լեզուներից ամենակարճ այբուբենն ունեն իտալերենը և ֆիններենը՝ ընդամենը 21 տառ: Իսկ ամենաերկար այբուբենը Կովկասում ապրող աբազիներինն է՝ 71 տառ:

Աշխարհի ամենալուռակյաց ժողովուրդները ֆիններեն են, այնուհետև կանադացիները:

Բաժինը պատրաստեց  
Ն. ՎԻՐԱՅԱՆԸ

## Իրական դեպքեր

Պալատականներից մեկին, որը հայտնի էր իր ծայրահեղ փառասիրությամբ, Լյուդովիկոս XIV-ը հարցնում է.

- Դուք ծանոթ եք իսպաներենին:

- Ոչ, տե՛ր իմ:

- Ավելի վատ Ձեզ համար:

Պալատականը ենթադրում է, որ իսպաներենի իմացության դեպքում իրեն կշնորհվի դեսպանի պաշտոն: Կարճ ժամանակամիջոցում, քրտնաջան պարապելով, նա տիրապետում է այդ լեզվին: Ներկայանալով թագավորին՝ ասում է.

- Ձերդ մեծություն, ես սովորել եմ իսպաներեն:

- Ձեր գիտելիքներն արդյոք հնարավորությո՞ւն են տալիս Ձեզ ազատ խոսելու մույնիսկ իսպանացիների հետ:

- Այո՛, տե՛ր իմ:

- Այդ դեպքում թո՛ւյլ տվեք Ձեզ շնորհավորել: Դուք կարող եք «Դոն Կիխոտը» կարդալ բնագրով:

\* \* \*

Ալբերտ Էյնշտեյնը դասախոսություն կարդալիս սովորաբար ընտրում էր դաշիլոնու մատած

ուղեգրից մեկին և խոսում էր այնպես, որ թվում էր, թե իր միտքը զարգացնում է հենց միայն նրա համար: Մի անգամ, երբ նա իր ասելիքն անվերջ ուղղում էր ուսանողներից մեկին, վերջինս, անչափ շոյված, ընդմիջմանը շողոթորթ ժպտով դիմեց դասախոսին.

- Ասացե՛ք, մաեստրո՛, ինչո՞ւ այսօր Ձեր խոսքն անվերջ ուղղում էիք իմ:

Եվ Էյնշտեյնը, որ չէր սիրում բծնաճք ու կեղծիք, պատասխանեց այսպես.

- Ես սովորություն ունեմ լսարանի ուղեգրիցների մեջ գտնել ամենաբութ դեմքը և բացատրել հատկապես նրան...Երբ այդ դեմքին վերջապես իմաստ է հայտնվում, ես հանգստանում եմ, որ մնացած բոլորը մույնպես հասկացել են դասախոսության նյութը:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ  
Խմբագիր՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 24.03.2023 թ.:

"ГИТУТЮН" ("Найка") газета НАН РА